№ 20 ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 19 **1894** ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 19 № 20

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ **1894** ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱԲՈՒՆԱԿՎՈՒՄ Է՝

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ 10 ր., տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., ամսական 1 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն հետեւեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «Мшакъ», իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընդհանուրի բարեկեցութիւնը. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նաւթային գործերը. Հայոց սեմինարիա Ատրախանում. Հայոց թատրօն. Նամակ Ախալցխայից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ Թիւրքայ Հայաստանից. Ասպէտ. Արտաքին լուրեր.—ԽԱՒՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐ ԹՂԹԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Զայն ղարբպի.

ԸՆԴՀԱՆՈՒՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹԻՒՆԸ

Կեանքի սովորական ընթացքի ժամանակ մարդիկ չեն կարողանում ճիշդ կերպով գնահատել ընդհանուրի բարօրութեան նշանակութիւնը և բաւականաչափ պարզ կերպով ըմբռնել այն տեսակէտը, թէ երկրի բարեկեցութիւնը միայն այն ժամանակն է հաստատուն և ապահով, երբ ընդհանրութիւնը գտնվում է բարեյաջող վիճակի մէջ։

Իւրաքանչիւր մարդ իր մասին է հոգ տանում, աշխատելով իր համար կարողութիւն և դիրք ձեռք բերել, յարմարութիւններով շրջապատել կեանքը, վայելքներով զարդարել ապրուստը։ Հարեւանի կեանքը, հասարակութեան վիճակը, ամբոխի դրութիւնը գուցէ երբեմն և հետաքրքրեն նրան, բայց ոչ իբրև լուրջ առարկաներ, այլ իբրև կենսական տպաւորութիւններ։

Բայց երբ ժողովրդի մեծամասնութեան կեանքը որ և է ձախորդութեան է հանդիպում, երբ օրինակ տարվայ անբերրիութիւնը հարիւրաւոր, հազարաւոր գիւղեր դատապարտում է նեղութիւնների և զրկանքների, երբ չքաւոր կեանքի պայմանները ծնում են վարակիչ ախտեր, և ճարակում են մեծ շրջաններ մահաբեր հիւանդութիւններով, այն ժամանակ է զգացվում, թէ ի՞նչ էական կապ կայ ընդհանրութեան մասերի մէջ, թէ ինչ սոսկալի հետեւանքներ կարող է ունենալ ընդհանուրի կեանքի պահանջների անտես առնելը։

Հասարակական երեւոյթների մէջ եղած այդ կապի, այդ պայմանաւորութեան գոյութիւնը սովորական ժամանակ թէև սքողվում, վարագուրվում է, բայց նա ոչ միայն կայ, այլ և անընդվզելի հետեւողականութեամբ ազդում է կամաց-կամաց կեանքի արտայայտութիւնների վրա և մի քանի տարիներից յետոյ առաջ է բերում նրա մէջ զգալի փոփոխութիւններ։

Ի՞նչ են այն գանգատները, որ լսվում են մեր գաւառական քաղաքներից վաճառականութեան անկման մասին։ Ի՞նչու ապրանքները չեն ծախվում, առուտուրը կանգնել է և խանութպանները շուարած չը գիտեն շարունակե՞լ իրանց գործը քիչ վստակով, թէ բոլորովին նրան դադարեցնել։

Մինչդեռ գաղտնիքը դժուար չէ գտնել։ Նա թաղնված է այն խնդրի մէջ, որի գոյութիւնը չէին ուզում նկատել առևտրականները, երբ նա դեռ չէր շօշափել նրանց գրպանը։ Այդ գաղտնիքը այն մեծ և անխզելի կապն է, որ կայ հասարակութիւն կազմող մասերի մէջ, որ գոյութիւն ունի ապրանք մատակարարողի և նրան սպառողի մէջ։

Ցիրաւի, ի՞նչպէս կարող է շարունակել իր գործը Ալէքսանդրոպոլի, Նոր-Բայազետի առևտրականը, երբ շրջապատող գիւղացին, որը ապրանքների ամենամեծ քանակութեան գլխաւոր սպառողն է, չունի ձեռք բերելու կարողութիւն, կորցրել է գնելու անտեսական իրաւունքը։ Նա լուռ է, նա անշարժ է և նրա համար պատրաստած մթերքները մնում են պահեստներում փակ, մինչև այն օրը, երբ սպառողը նորից միջոց կունենայ պահանջներ անել։

Այն՝ ինչ այսօր գոյութիւն ունի Անդրկովկասում, համանման բայց աւելի ևս մեծ չափով տեղի ունի եւրօպական Ռուսաստանում, ուր անբերրիութեան սարսափելի արհաւիրքներից յետոյ՝ գիւղացի դասակարգը ամենածանր անտեսական վիճակի մէջ ընկաւ և կորցրեց իր ապրանքը գնելու, մթերքներ ձեռք բերելու ոյժը և ընդունակութիւնը։ Մոսկվայի գործարանատէրերը այս րոպէիս շուարած մնացել են, ապրանք առնողներ չը կան, մինչդեռ նրանք խաբվելով այս տարվայ ուռնավաճառի աջող առուտուրից՝ կարծեցին թէ դաւառները պէտք է շարունակեն ապրանք պահանջել նախկին տարիների հաշուով։

Այո, մեծ է սպառողի տնտեսական վիճակի նշանակութիւնը, մեծ է ժողովրդի մեծամասնութեան բարօրութեան նշանակութիւնը։ Երբ մեծամասնութիւնը ապահով է, նա իր ձեռքին ունի սպառելու մեծ ոյժ և ընդունակութիւն։ Երբ գիւղացին հարուստ է, նա կարող է մեծ քանակութեամբ գնել օրինակ չիթ, մահուդ, շաքար և ամեն տեսակ ապրանքներ և այդպիսով միջոց տալ, որ այդ ապրանքները պատրաստող գործարաններն ևս լայնացնեն և մեծացնեն իրանց արդիւնաբերութիւնը։ Իսկ սրանց զարգացումը կաղդի և ուրիշ արդիւնաբերութիւնների վրա, որոնք անմիջական կապ չունեն գիւղացու հետ։

Ահա ինչու մեծ սխալ և յանցանք պէտք է համարել, երբ հասարակութեան ձեռնհաս մասը, մոռանալով երկրի արդիւնաբերութիւնը աւելացնելու մասին՝ բացառիկ կերպով հոգ է տանում գործարանատէրերի և առևտրականների մասնաւոր և ժամանակաւոր շահերի վրա, անտես առնելով ժողովրդի մեծամասնութեան, գիւղական դասակարգի տնտեսական զարգացման խնդիրները։

Մի ուրիշ յօդուածով ցոյց կը տանք, թէ ինչպէս յաճախ անտես են առնվում գիւղական դասակարգի, հողի ներկայացուցիչների շահերը՝ զանազան տնտեսական ծրագիրներ մշակելու ժամանակ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԻԹԱՑԻՆ ԳՈՐԾԵՐԸ։

Իր ժամանակին մենք հաղորդել էինք ընթերցողներին այն հեռագրի մասին, որ ուղարկել էին Բագուի կերօսինագործները Ֆինանսների մինիստրին, երբ Նօբել ընկերութեան ներկայացուցիչ

պիտ. ղրկէ, խոստացաւ փութով պատասխաններ բերելու։

—Իսկ ծախս։

—Ծախս ըսաւ քիչ կառնեմ։

20 կոպէկ Նամակի գրողէն, 20 կոպ. ղրկելէն, և իւրաքանչիւր ոսկւոյն 50-ական կոպէկ։ Յայտնի բան է, ըսաւ վաչխառուի հաշւոյն դա քիչ է։ Վաչխառուն ստացած փողերը 15 օրվայ չափ պահում է քով, որ յաջող պարագայում, ևս շահաւորվի. յետոյ այդ փողերն փոխարինելով արժեթղթերի՝ ղրկում է հայրենիքը։ Ղրկած արժեթղթերն գնալով երկիր՝ իսկոյն չեն ծախվի և հետեւապէս գիրերը հասած օրից երկու շաբաթ յետ՝ ազդարարութիւն կը տան Նամակատէրերին, թէ ձեր ղարիպներից գիր և փարայ է եկած, մէկ մէկ փէշքէշ բերեցէք մեզ, որ գիրեր հանդերձ փոդերով տանէք։

Խեղճ գեղջկուհին, ով գիտէ, քանի՞ ուրախացաւ, հրճուեցաւ, կենդանացաւ, երբ լսեց իր զարիպից գիր է եկած. զարիպի տանից հեռանալը ամբողջ տարի մէ, տունը մնացեր է այնուհետև անտէրունջ, անոք։ Մի քանի մերկ, նօթի երեխերքը մայրիկով միայնակ, հաց չը կայ, չոր ու ցամաք, պարտատէրն խեղճի անասունները զօռով տարած է և չորս կողմից նեղութիւնք խեղդած են անբաղդ կնոջ ամուսնու բացակայութիւնից յետ։

Նոյն վայրկեանում անշուշտ պէտք է ցորենի ալիւր ճարէ ո և է տեղից մը՝ իւղաբլիթներ թըխելու, հաւեր կարմրցնէ, խորովէ քանի մալ զոյգ լաւ գուլպայ, բոլորն առնելով տանում է վաչխառուին փէշքէշ, որն փէշքէշն ստանալով իւրաքանչիւրէն՝ մէկ մէկ գիր ալ կառնէ և ստացած գրերի ղրկողէն հինգ հինգ ղրուշ (40 ական կոպ.) իր մօտ ունեցած գումարից կը զեղչէ, այնուհետև մնացեալ փողերն կը յանձնէ տէրերին։ Իսկ առած գիրերն ղրկում է այն տեղեր, ուրկից փողերն եկած էր—Բաթում, Թիֆլիս և այլն։ Այնու ամենայնիւ, փոդատու մշակներն հանապազօր ղիմումներ են անում վաչխառուին՝ երկրից պատասխան պահանջելով. իսկ նա կեղծ և զանազան պատճառներով, անթիւ երդումներով հաւատացնում է նրանց թէ ճանապարհին պօսթը արգելում է և գրերը ուշանում են, չը մտաբերելով իր խարդախութիւնները։

Վերջապէս երեք ամսուց վերջ օր մը վաչխառուն ուրախութեամբ կանչում է մշակաց իր սենեակը, և իւրաքանչիւրէն մէկ մէկ աբասի առնելով՝ բերած գրերը յանձնում է նոցա։

Պատահում է դարձեալ, վաչխառուները հայրենակիցներուս սենեակները գնում են։ Անշուշտ լսում եմ թէ ինչեր են քարոզում։

—Ձեզանէ ով ոք այլ տեղերում կամ անձանց փող ունի պահ տուած, պէտք է բերէ յանձնէ ինձ, որովհետև ես ձեր, դուք իմ էք, շահ էլ կը տամ և ապահով կը պահեմ։

Ահա այսպիսի խաբէութեամբ ունեցած չունեցածներին կառնէ, առնելէն զկնի անյապաղ գրում է երկիր իր ընկերին, թէ այս ինչ գիւղացուն կամ այն ինչ քաղաքացուն փօլոս տուր, իսկոյն ընկերը հարկ եղած մարդուն փօլոս կը տայ սա պայմանաւ,—տան համար հարկաւոր կը լինի ապրանք, ապրանք կը տայ, որից հետ մի քիչ ալ կանխիկ փող ու մուրհակը գրում է 30% տոկոս բարդելով վրան. դիցուք 200 դրուշ հասուցած է տան, այն ժամանակ մուրհակում գրում է 260 դրուշ։ Բանը սա է, որ մուրհակն գալով հոս տիրոջ ցոյց չի տայ, այլ ատեն մը քով պահելէն վերջ ղրկում է յետ մի և նոյն տան կամ անձին՝ ուրկից եկած էր։ Ինչ դժոխային մըտածութիւններ, ցաւեր թափվում են յիշեալ ընտանեաց վրա, երբ իրենց փօլոսը յետ է դարձած զարիպից (իբր չէ ընդունած)։

Վերջին աստիճան յուսահատութեան մէջ ընկղմված՝ դիմում են կրկին անդութի գթութեանը, որոյ փափագը ևս այդ էր. այն ատեն մուրհակը փոխվում է. եթէ առաջ 4 ոսկի էր պարտնակութիւն, այժմ կը լինի $6^1/_2$ ոսկի։ Եւ քանի՞ ընտանիք այդպիսով կորցրած են իրենց կալուածքներ, տուն, տեղ վաչխառուի երեսէն, այդ Մուշ և Բիթլիս գիտէ։

Ի՞նչ խաբեբայ, սատանայական խարդախութիւններ են գործում ժողովրդի մէջ. իրաւ է, ասում ենք, թուրք, քուրդ մեզ կը հարստահարեն, վաչխառուք թուրքից, քուրդից աւելի կեղեքում են թէ հայրենիքում և թէ դուրսի աշխարհներում. դարձ նման են այն նեխացած վէրքին, որն արտաքուստ առողջ, բայց ներքուստ եռացող որդունք՝ ընդ միշտ կը ճղնին քնքոյշ միսը ուտելու և վարդագոյն արիւն ծծելուն։

Ձեզ եմ ասում, ձեզ, ով թուրքաստանցի վաչխառուք, խօսքս դէպ ձեզ է. ով ոք կը հանի գալ յաստպարէզ մի առաջարկ անելու՝ ես, ընկերներս սիրով ընդունում ենք, և կենդանի վկաներով կարող ենք եղելութիւնը հաստատապէս իրականացնել և ապա հրապարակաւ սև երես էք լինում։ Եւ դուք, ով համազգի եղբայրներ, զգուշացրէք, կարեկցէք և մխիթարեցէք այդ տարաբաղդներին. չէ՞ որ նա պանդուխտ վշտահար է, իրեն շահը՝ թոյն է, աչքը կուրացած է, միտքը պղտորած է, իսկ ինքը թէև ազատասէր, գերի է այժմ. ազաքէն դայ... օրը, որ ձեռ ձեռի տալով ասէք.—Ազատ ենք։

Իսկ դու, ով հայոց «Մշակ», դու որ լաւագոյն համարեցիր մշակ յորջորջվիլ, աներկայ հաւատացած եմ որ մշակներուս ջատագով և ձայնը լսող ես. քեզ ենք դիմում, աղերսում, առ ընդունիր սա տողեր, ամփոփիր թերթումդ, տար ի սրփիւռս աշխարհի, տարածիր այն համայն կարեկից հայ սրտերում, որ զարթին, ուշի դան, մերձանան իրենց անկեալ զարիպ հայաստանցիներին—վշտին վշտակից և ուրախութեան ուրախակից...

Տարօնցի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՁԱՅՆ ՂԱՐԻՊԻ

Զրկվելով մեր բնականունդ հողից, հովասուն հովիտներից, կանաչաղարդ արօտամարգերից, դալարագեղ այգիներից, յորդահոս, քաղցրահամ գետերից և զուլալ աղբիւրներից, մեր նախահարց մատամբ կառուցած նուիրական սրբավայրերից, ի մի բան՝ մեր կենսատու հայրենիքից, զրկված ենք և բանական խելքից։

Թողած՝ տուն, տեղ, կայք, գերդաստան, ընկած օտար երկրներում և հանգամանքների անյաջողութիւնից ստիպեալ՝ վայրից վայր, քաղաքից քաղաք խելագարի նման թափառիլ ընտանեաց օրապահիկն հայթայթելու... Ո՛հ, որքան թշուառ է դոցա վիճակը, որքան անբաղդ են ծնված աշխարհիս վրա, չունենալով մի կարեկից։ Հայրենական տանից խոյս տալու պատճառն արդէն հանրածանօթ է—խուժանին ճիրաններէն և եղեռնագործութիւններէ, իբր ազատ, ապահով ժամանակաւորապէս կենցաղավարելու նպատամբ՝ դիմում են յօտարութեան՝ ամենատոր տաժանակիր աշխատութեանց ենթարկելով իրենց մարմինը, և զոգիները մաշեցնելով, հազար ու մէկ անգամ նախատվելով՝ հաղիւ հաց, օրական 50 կոպէկով կը վարձատրվին։ Սակայն, այդ արիւն քրտինքով վաստակած կոպէկները միայն իրենք և իրենց ընտանեաց միասին վայելէին, թող բիւր անգամ փառք տային Աստծուն, և չնորհակալ լինէին։

Մերթ ընդ մերթ, երբ գնում եմ հայրենակցածս այցելելու՝ տեսնում եմ որ պ. վաչխառուն դուրս է գալիս նրանց քնարաններից, կը հարցնեմ։

—Ի՞նչ կայ, տղէք։

—Ոչինչ, փոդերնիս առաւ փօլոսաչին, տուներ

զոր դիմումներ են անում վաչխառուին՝ երկրից պատասխան պահանջելով. իսկ նա կեղծ և զանազան պատճառներով, անթիւ երդումներով հաւատացնում է նրանց թէ ճանապարհին պօսթը արգելում է և գրերը ուշանում են, չը մտաբերելով իր խարդախութիւնները։

Վերջապէս երեք ամսուց վերջ օր մը վաչխառուն ուրախութեամբ կանչում է մշակաց իր սենեակը, և իւրաքանչիւրէն մէկ մէկ աբասի առնելով՝ բերած գրերը յանձնում է նոցա։

Պատահում է դարձեալ, վաչխառուները հայրենակիցներուս սենեակները գնում են։ Անշուշտ լսում եմ թէ ինչեր են քարոզում։

—Ձեզանէ ով ոք այլ տեղերում կամ անձանց փող ունի պահ տուած, պէտք է բերէ յանձնէ ինձ, որովհետև ես ձեր, դուք իմ էք, շահ էլ կը տամ և ապահով կը պահեմ։

Ահա այսպիսի խաբէութեամբ ունեցած չունեցածներին կառնէ, առնելէն զկնի անյապաղ գրում է երկիր իր ընկերին, թէ այս ինչ գիւղացուն կամ այն ինչ քաղաքացուն փօլոս տուր, իսկոյն ընկերը հարկ եղած մարդուն փօլոս կը տայ սա պայմանաւ,—տան համար հարկաւոր կը լինի ապրանք, ապրանք կը տայ, որից հետ մի քիչ ալ կանխիկ փող ու մուրհակը գրում է 30% տոկոս բարդելով վրան. դիցուք 200 դրուշ հասուցած է տան, այն ժամանակ մուրհակում գրում է 260 դրուշ։ Բանը սա է, որ մուրհակն գալով հոս տիրոջ ցոյց չի տայ, այլ ատեն մը քով պահելէն վերջ ղրկում է յետ մի և նոյն տան կամ անձին՝ ուրկից եկած էր։ Ինչ դժոխային մըտածութիւններ, ցաւեր թափվում են յիշեալ ընտանեաց վրա, երբ իրենց փօլոսը յետ է դարձած զարիպից (իբր չէ ընդունած)։

Վերջին աստիճան յուսահատութեան մէջ ընկղմված՝ դիմում են կրկին անդութի գթութեանը, որոյ փափագը ևս այդ էր. այն ատեն մուրհակը փոխվում է. եթէ առաջ 4 ոսկի էր պարտնակութիւն, այժմ կը լինի $6^1/_2$ ոսկի։ Եւ քա-

պ. Բելեամինը առաջարկեց անցեալ հոկտեմբերի 26-ին կազմած պայմանագիրը քանդել։ Ներկայ յօդուածով մի քանի խօսք կասենք նրա ունեցած հետևանքների մասին։

Ֆինանսների մինիստրութիւնը, սկզբունքով ընդունելով տարիֆի պակասեցնելը, կարգադրեց կազմել մի մասնաժողով, որին և յանձնվեց որոշել նրա չափը՝ ի նկատի առնելով բոլոր պարագաները։ Մասնաժողովը սկզբում որոշեց փոփոխական (боевой) տարիֆ սահմանել, այսինքն այնպիսի տարիֆ, որով միջոց տրվի մեր կէրոսինագործներին յամենայն դէպս ստանալ կէրոսինի արժողութիւնը Բագու։

Կէրոսինի իսկական արժողութեան մասին երկու կարծիք յայտնվեց։ Մասնաժողովի անդամների մի մասը կերոսինի արժողութիւնը հաշուում էր 5 կօպ., իսկ միւս մասը $8^1/_2$ կօպ.։ Զարմանալին այն էր, որ պ. Բելեամինը հաւանութիւն էր տալիս առաջին կարծիքին, որը զուրկ է որ և է հիմքից։ Մենք կատարելապէս զարմանում ենք այդ մարդու վրա։ Նրան, աւելի քան որ և է ուրիշին, յայտնի է նաւթարդիւնաբերական գործի բոլոր մանրամասնութիւնները, բայց նա պաշտպանում է մի այնպիսի կարծիք, որի իրագործումը շատ վատ հետևանքներ կարող ունենալ ոչ միայն մեր փոքր կամ միջակ կէրոսինագործների համար, այլ նոյն իսկ Նոբելի համար։ Պաշտպանել մի այդպիսի կարծիք, երբ նրա վնասը բոլորի համար ակնյայտնի է, կը նշանակէ ամենասխրելի թշնամի լինել կէրոսինագործներին։

Բարեբաղդաբար, մասնաժողովը չը բաւականացաւ միմիայն պ. Բելեամինի, որպէս կէրոսինագործների ներկայացուցչի կարծիքով, այլ կամեցաւ իմանալ նաև մնացեալների կարծիքը։ Այդ վերջինները յայտնեցին հետևեալ կարծիքը. «եթէ կէրոսինի իսկական արժողութիւնը կը հաշուէք $8^1/_2$ կօպ. համաձայն ենք փոփոխական տարիֆ սահմանելու, թէ ոչ նրա տեղը ցանկալի էր տեսնել որոշ տարիֆ 7—8 կօպ. պակաս՝ ներկայումս գործածվողից։

Տարիֆի պակասեցնելու հարցը մի այդպիսի կերպարանք ստանալուց յետոյ, մանուֆակտուրայի և արդիւնաբերութեան դեպարտամենտի դիրեկտոր պ. Կավալեվսկին հաղորդեց մեր կերոսինագործներին, թէ տարիֆի պակասեցնելուն այս կամ այն ձև տալը թողնվում է այն ժողովին, որտեղ կը քննվի դաշնակցութեան երկու խմբերի փոխադարձ պայմանագիրը։ Այդ ժողովի պարապմունքները արդէն յունվար ամսի 27-ից սկսված են։ Ժողովին մասնակցում են նաև առաջին խմբի կէրոսինագործների կողմից՝ պ.պ. Բելեամին և Ղուկասեան, իսկ երկրորդի կողմից՝ Ա. Մանթաշեան և Գր. Լիանոզով։

Փետրվարի 15-ին Բագուում պ. Մանթաշեանից ստացված է հետևեալ հեռագիրը. «Շնորհաւորում եմ։ Երկու խմբերի փոխադարձ պայմանագիրը և նրանց գործակալների համաձայնութիւնը վերջնականապէս մշակված են։ Վաղը ստորագրելուց յետ կը հաղորդեմ նրանց էութիւնը։ Արտասահմանի վաճառքները դադարեցրէք։ Տարիֆը շուտով կը պարզվի»։

Ֆ. Մ.

ՀԱՑՈՑ ՍԵՄԻՆԱՐԻԱՆ ԱՍՏՐԱԽԱՆՈՒՄ

Վերջապէս յարուցվեց սեմինարիայի հարցը Աստրախանում։ Այդ խնդրի մասին քանի տարի է որ խօսում են, բայց միշտ էլ այդ հարցը, փող չը լինելու պատճառով, մնացել էր հարց։

Վերջերս ընտրված էր մի յանձնաժողով, որ պէտք է գլխաւորապէս աղբիւրներ գտնելու մասին մտածէր։ Ահա այդ յանձնաժողովը, յունվարի 24-ին, Աստրախանում ընդհանուր ծխականների ժողովին ներկայացրեց իր մշակած ծրագիրը։ Ժողովը այդ օրը սովորականից բազմամարդ էր և շատ հետաքրքիր։ Նախագահ պ. Գոստինցեան, նկարագրելով սեմինարիայի նշանակութիւնը և նրա անհրաժեշտութիւնը Աստրախանի թեմի համար, կարդաց յանձնաժողովի ծրագիրը, որից երևաց, որ յանձնաժողովը տարեկան ծախս հաշուել է առ նուազն 11,000 ռուբլի։ Այդ գումարը, յանձնաժողովի կարծիքով, կարող են տալ թէ քաղաքի և թէ վիճակիս եկեղեցիները։

Աստրախանի վրա հաշուած է 8000 ռուբլի այսպէս՝ 1) եկեղեցիներից 6000 ռ. 2) սեմինարիան բացելուց մնաղրվում է փակել միդասեան ծխական դպրոցը, որի վրա ծախս է գնում 1000 ռ., 3) կայ և 1000 ռ. եկամուտ մի փոքր գումարից, որ մնացել է մի ժամանակ մեզանում գոյութիւն ունեցող սեմինարիայի փակելուց յետոյ։ Մնացած գումարը յանձնաժողովը կարծում է, որ կարող կը լինի լրացնել թեմը։

Այդ կէտը երկար խօսակցութեան առիթ տրուեց։ Շատերը կարծում են, որ կարելի կը լինի ժողովարարութեամբ այնքան փող ժողովել, որի տոկոսներով կարելի լինի պահել դպրանոցը։ Եւ այդ պատճառով ժողովը առ այժմ այդ հարցը առկախ թողեց և վճռեց խնդրել թոյլ տալ բանալու մի ժողով ևս և հրաւիրել բոլորին՝ մի անգամ ևս խորհրդակցելու աղբիւրների մասին։

Շատ ցանկալի էր, որ այդպէս լինի, և կատարվի մեր հասարակութեան վաղուցվայ ցանկութիւնը։ Սակայն մենք կարծում ենք, որ եթէ այդ ժողովարարութիւնը չաջողվեց, գործը յետ չը պէտք է դցել, այլ պէտք է դիմել և թոյլատրութիւն խնդրել՝ եկեղեցական գումարներով սեմինարիան բանալու մասին, որովհետև այդ եկեղեցիները այնքան ապահով են, որ հեշտութեամբ կարող են տալ իրանց վրա հաշուած գումարները։

Ց. Ս.

ՀԱՑՈՑ ԹԱՏՐՈՆ

Փետրվարի 17-ին, Թիֆլիսի հայոց դերասանական խումբը խաղաց մի հետաքրքրական պիէս,— Պարոնեանի «Մեծապատիւ Մուրացկանները», որ բեմի համար փոխադրել է դերասան պ. Սարգարեան։

Ցաղանդաւոր երգիծաբանի ճշդութեամբ նկարագրած տիպերը, անմահ իմօրը և սրամիտ խօսակցութիւնները անվերջ ծիծաղ պատճառեցին հասարակութեան։

Բեմի վրա միմեանց յաջորդում էին մեծապատիւ մուրացկանները, մէկը միւսից աւելի ծիծաղելի, մէկը միւսից աւելի ողորմելի,—ստորաքարշութեամբ բաժանորդներ որսացող ազգային խմբագիրը, Հայաստանի անունով ողորմութիւն խնդրող ազգային բանաստեղծը, հայաղն հիւանդներ որոնող ազգային բժիշկը, դիմամբ կռիւներ սարքող ազգային փաստաբանը, քաղցած ազգային վարժապետը, և նոյն իսկ ազգային սատիրիչը, որ ազգասիրաբար մօցիքլութիւն է անում,—որոնց ամբողջ ազգասիրութիւնը, ճառախօսութիւնները և ախ ու վախերը վերջանում են մի բանով, կամ ինչպէս հեղինակն է ասում. «բարով, Աստուծու բարին, փարա տուր»։

Պէտք է խոստովանել, որ դերակատարները ընդհանրապէս վատ չէին խաղում.—պ. Տէր-Դաւթեան վերցրել էր ամենապատասխանատու դերը, որը և կատարեց, բացի երրորդ գործողութիւնը, բարեխիղճ կերպով։ Միւս գլխաւոր դերերից՝ Մանուկ-աղայի դերը՝ պ. Պետրոսեանին չաջողվեց. Պօլսի բարբառի չիմանալը շատ էր վնասում դերասանին։ Պ. Աբէլեան, որ խաղում էր ազգային-խմբագրի դերը, մի փոքր չափազանցրեց. կարծէք ինքն դերասանը տրամադրված էր ծիծաղել իր ներկայացրած տիպի վրա։ Եթէ այդ չը լինէր, պ. Աբէլեանի խաղը վերին աստիճանի աջող ղուրս կը գար, որովհետև նա բաւական լաւ ուսումնասիրել է պօլսական ձևերը։ Վատ չէին տ. Զաբէլ և պ. պ. Ցարութիւնեան, Սարգարեան և Աղայեան իրանց դերերում։

Մի քանի խօսք «Մեծապատիւ մուրացկանների» փոխադրութեան մասին։ Պիէսի առաջին գործողութիւնը շատ լաւ է կազմած. վատ չէ և երրորդ գործողութիւնը։ Սակայն երկրորդ գործողութիւնը անտանելի, ձգձգած, տաղտկալի է, և յոգնեցուցիչ։ Երկրորդ գործողութիւնը այնքան յոգնեցնում է, որ մարդ մի տեսակ անախորժութեամբ է նայում և երրորդ գործողութեանը։ Անհրաժեշտ է ձիգ խօսակցութիւնները, որտեղ գործողութիւններ չը կան, կրճատել։ Իսկ այնպիսի անհամ խօսակցութիւնները, ինչպէս են բժշկի հարց ու փորձը Աբիսողոմ աղայից՝ նրա առողջութեան մասին և այլն,—բոլորովին անտեղի են, նոյն իսկ անվայել։

Մեզ թվում է, որ «Մեծապատիւ մուրացկանները» մի քիչ կոկելով՝ կարելի է դարձնել մի սիրուն պիէս, որը թէ Թիֆլիսում և թէ գաւառներում հասարակութեանը շատ դուր կը գայ, մանաւանդ որ այդ նոյն հասարակութիւնը ամեն օր տեսնում է կեանքի մէջ բազմաթիւ իսկական մեծապատիւ մուրացկաններ....

*

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

—

Փետրվարի 14-ին

Ամսիս 6-ին, կիրակի օրը, հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ, նշանակված էր մեր երկսեռ ուսումնարանների երկու հոգաբարձուներ ու նրանց անձնափոխանորդներ ընտրելու համար ծխական պատգամաւորների ընտրութիւնը։ Նշանակված օրից միմիայն երկու օր առաջ սկսել էին հրաւիրատերերեր շրջեցնել ժողովի մասին ծխականներին յայտնելու համար։ Ընտրութեան օրը այդ շրջեցրած հրաւիրատերերից երևաց, որ ծխականների ընդհանուր թվից կիսին անգամ չէր յայտնված. այդ երևում էր նրանց ստորագրութիւններից։ Որովհետև ընտրութիւն կարելի էր կատարել այն ժամանակ, երբ ծխականների $^1/_5$ մասը մասնակցում է, ուստի և օրինական թիւ չը լինելու պատճառով՝ ընտրութիւնը չը կայացաւ, յետաձգվեց հետևեալ կիրակի օրվան։

Ամսիս 13-ին նշանակված էր երկրորդ ժողովը, որը նոյնպէս չը կայացաւ՝ ընտրողների օրինական թիւ չը լինելու պատճառով։ Այս ժողովում նախագահող գործակալ քահանան յայտնեց ժողովականներին, որ հանդուցեալ կաթողիկոսի հրատարակած կանոնադրութեան համաձայն՝ ընտրութիւն կը կատարվի այն դէպքում, երբ բոլոր ծխականների $^1/_5$ մասը ներկայ կը լինի և որովհետև այս երկրորդ անգամն է, որ ծխականների օրինական թիւ չէ կազմվում, այդ պատճառով էլ պէտք է դրվի այս մասին թեմական առաջնորդին, որպէս զի նա ինչ որ հարկաւոր է տնօրինէ։ Մի ժողովական ցանկութիւն յայտնեց իմանալու, թէ արդեօք բոլոր ծխականներին ժողովի մասին յայտնված է. և երբ երևաց, որ 230 ծուխ ունեցող քահանայի ծխականներից միմիայն 27-ին է յայտնված, այդ ժամանակ առաջարկվեց նախագահ քահանային, որ նախ հրաւիրվեն բոլոր ծխականները և ապա օրինականութիւն ստանայ ժողովը։ Ծխականների անուանացուցակից երևաց, որ 1300 աւելի ծխականներից կէսին անգամ չէ յայտնված, հաշուելով և այն բազմաթիւ մը և նոյն ձեռքով գրված «լսեցի»-ները, որ գործը հեշտացնելու համար ինքը շրջեցնողն է գրել. իսկ թէ այդ «լսեցի» գրածներին երբ յայտնված է, այդ մասին հաստատ ոչինչ չենք կարող ասել։ Նախագահ քահանան յայտնեց, որ բացի հրաւիրատերերի շրջեցնելուց՝ նաև բոլոր եկեղեցիներում ծանուցումն է եղել։ Ժողովականներից ոմանք նկատեցին, որ այդ ծանուցումն դժուար թէ նշանակութիւն ունենար, եթէ ի նկատի առնվի այս ամբողջ շաբաթ շարունակ տեղացող սաստիկ ձիւնը, որի պատճառով ժամ գնացողների թիւը շատ սակաւ էր։ Միով բանիւ, ի նկատի առնելով թէ այդ, թէ այն հանգամանքը, որ բոլոր ծխականներին չէ յայտնված կայանալիք ժողովի մասին, միանգամայն օրինական է յետաձգել ժողովը հետևեալ կիրակի օրվան, որովհետև ժողով չը կայանալու պատճառը ծխականների զանցառութիւնը չէ, այլ ծխատէր քահանաներինը և ընութեանը։

Այդ առիթով խիստ վիճաբանութիւն սկսվեց, որից յետոյ ժողովականների մի մասը թողեց ժողովն ու հեռացաւ, իսկ միւս մասը համամիտ լինելով ժողով չը կայանալու օրինականութեան հետ, ստորագրեց արձանագրութիւնը, որ «ծխականների զանցառութեան պատճառով» ժողովը չը կայացաւ։ Մի քանին էլ արձանագրութեան մէջ նկատեցին ժողով չը կայանալու բուն պատճառները։ Ահա այսպէս վերջացաւ մեր երկսեռ ուսումնարանների հոգաբարձական ընտրութեան գործը։

Մենք ժողովից հեռացանք այն տպաւորութեան տակ, որ կարծես թէ մի կարգ մարդկանց բուռն ցանկութիւնն էր, որ ժողովը չը կայանայ և մենք միանգամայն համոզված ենք այդ բանում, որովհետև ուր բուն ժողովրդական ընտրութիւն է լինում, այնտեղ նրանց «վէզը ալչու չէ կանգնում»։ Այո, կար ժամանակ, երբ այդ մարդիկ իրանց ընտրվելու վրա միանգամայն վստահ էին, իսկ այդ երանելի ժամանակը անդարձ անցաւ։

Ռ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ալէքսանդրօպոլ, փետրվարի 10-ին

«Մշակի» № 15-ի մէջ Հայ-կաթոլիկ ստորագրութեամբ մի յօդուածում, որ վերաբերում է Թիֆլիսի հայ-կաթոլիկների եկեղեցական խնդրին, յօդուածագիրը սխալմամբ կամ անգիտութեամբ, այդ եկեղեցու շինութեան գործը վերագրում է կապուցին լատին միաբաններին, այն ինչ այդ եկեղեցին շինել են հայ ունիթօռները, որոց նախնիքը դեռ 13 դարից կրօնափոխութեան արշաւանք են կատարել Հայաստան և Վրաստան և շրջել են կապուցինների հագուստով։

Այդ մասին խորհուրդ կը տանք Թիֆլիսի մեր դաւանակից եղբայրներին կարդալ 1888 թ. «Մշակ» լրագրի №№ 24—29 համարները «Հայ-կաթոլիկութեան մուտքը Վրաստան և վրացախօս հայ-կաթոլիկները» վերնագրով մեր յօդուածները, որտեղ պատմական փաստերով ապացուցված է այդ եկեղեցու իրաւունքների խնդիրը և թէ որպիսի փոփոխութիւնների է ենթարկվել նա մինչև մեր օրերը։ Ուրախալի է այժմ, որ Թիֆլիսի հայ-կաթոլիկները վերջապէս անտարբեր չեն երևում ղէպի ազգային հայ-կաթոլիկ եկեղեցական խնդիրը, որի բարեյաջող լուծման հետ կապված է Անդրկովկասի ամբողջ հայ-կաթոլիկ հասարակութեան առաջադիմութեան գործը։

Պետրոս Բէքուրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կ. Պոլսից, յունվարի 26-ից, մեզ գրում են. «Էջմիածնի «Արարատ» ամսագրին մէջ կաթողիկոսական անդրանիկ կոնդակին հրատարակված ըլլալը մեր թերթերը հաղորդեցին. առ այժմ այսքան գիտենք, ուրիշ ոչինչ։ Իմացանք նաև որ կաթողիկոսական կոնդակին երեք ընագիր և պատճէնները հասած են Պօլիս և պատրիարքարանէն յանձնուած են ոստիկանութեան քննուելու համար։ Երբ վաւերացուին՝ այն ատեն միայն կը կարդացուին եկեղեցիներու մէջ։ Թերթերը ոչինչ չը գրեցին կոնդակին Պօլիս հասնելու մասին»։

—

Ցիշեցնում ենք Բարեգործական ընկերութեան անդամներին, որ վաղը, կիրակի, փետրվարի 20-ին, երեկոյեան 7 ժամին, դումայի դահլիճում լինելու է այդ ընկերութեան ընդհանուր ժողով։

—

Լսում ենք, որ Ներսիսեան դպրոցի տեսչի պաշտօնակատար Կոստանեան թոյլ չէ տուել դպրոցի գրադարանում ունենալ Գրիգոր Աբծրունու «Էվէլինա» գիրքը։

—

Նախկին Դօրպատ, այժմ Իւրիէվ քաղաքում մի պարոն, Ա. Գրէնցշտայն անունով, ցանկանալով հրատարակել մի աշխատութիւն «Ժողովուրդների ազգային կեանքի կուռ» մասին, դիմել է շրջաբերականով զանազան ձեռնհաս անձանց՝ խնդրելով որ իրան հաղորդեն այդ մասին տեղեկութիւններ և ցոյց տան աղբիւրներ։ Ահա այն հարցերը, որոնց պատասխանները ամենից շատ ցանկալի են. ինչպէս է այդ ժողովրդի ընկերական և նիւթական վիճակը. նրա թիւը աճում է թէ նուազում. ինչ վիճակի մէջ է նրա գրականութիւնը և մասաւոր զարգացումը. ունի՞ այդ ժողովուրդը ազգային ձգտումներ և եթէ ունի՝ որքան հին են այդ ձգտումները. ինչ ուղղութիւն ունեն, որքան բարիք կամ չարիք են ստեղծել այդ ձգտումները ժողովրդի համար. ով է կուռում նրանց դէմ. ինչ բան նպաստում է նրանց աջողութեան կամ արգելք է լինում զարգացմանն։ կան նրա մէջ ազգայնական կուսակցութիւններ։

—

Բուդապէշտում հրատարակվող «Revue d'Orient» ֆրանսիական շաբաթաթերթի փետրվարի 18-ի համարում տպված է նորերս հանգուցեալ վրաց վիպասան Ալէքսանդր Կազբէկի «Էլիսսո» վէպիկը։

—

Ամսիս 17-ին, հինգշաբթի, առաւօտեան 8 ժամին, երկաթուղու գնացքով Թիֆլիս բերվեց Կարսում վախճանված բժիշկ Շահրիար Մելիք-Փարսադանեանի մարմինը։ Կայարանում հաւաքվել էր հանգուցեալի ծանօթների, բարեկամների և ընկերների մեծ բազմութիւն։ Այդտեղ, բացի Կարսում նրա դագաղի վրա դրված 37 պսակներից, 4 պսակ ևս դրվեց մասնաւոր անձանց և Թիֆլիսի բժիշկների կողմից։ Կայարանից մարմինը փոխադրվեց Խօջիվանքի եկեղեցին, որտեղ պատարագի ժամանակ Զմշկեան քահանան մի քարոզ խօսեց հանգուցեալի մասին։ Պատարագից յետոյ տեղի ունեցաւ թաղումը նոյն գերեզմանատան մէջ։ Գերեզմանի վրա ճառեր արտասանեցին պ. Մա-

մուլեան, որ Կարսի հայ հասարակութեան կողմից պատգամաւոր էր եկել, և բժիշկ Մամինովը։

—

Նորերս Կ. պոլսեցի հայ դաշնակահար Վահրամ Սրվանձեան տուել է մի կոնցերտ Մանչեստրում, որին ներկայ էր մեծ բազմութիւն անգլիացի հասարակութեան։ Մանչեստրի լրագիրները մեծ գովեստով են խօսում հայ պիանիստի տաղանդի և ածելու մասին։ Պ. Սրվանձեան մտադիր է մի կոնցերտ էլ Լոնդոնում տալ։

—

Մեզ վրա շատ ծանր տպաւորութիւն է թողնում այն հանգամանքը, որ Յովհաննան—Մարիամեան օրիորդաց դպրոցի պաշտպան է դուրս եկել «Արձագանքի» նման թերթը։ Քննադատելով այդ դպրոցի զանազան թերութիւնները, մենք այն կարծիքի էինք, որ այդ ուսումնարանը ունի և լաւ կողմեր, նա մանաւանդ՝ կանոնաւորվելու ամեն տեսակ յարմարութիւններ.—բայց այն օրից, երբ «Արձագանքը» սկսել է կատաղի պաշտպան հանդիսանալ այդ դպրոցին և լինել նրա օրգանը, այդ օրից մեր հաւատը սկսել է աւելի և աւելի թուլանալ դէպի այդ հիմնարկութիւնը։ Եւ ճշմարիտ. այն բոլոր հիմնարկութիւնները, որոնք գտնվել են և կամ այժմ գտնվում են «Արձագանքի» պաշտպանութեան ներքոյ, հազարաւոր փաստերով ապացուցված է, որ այդ հիմնարկութիւնները վերին աստիճանի ընկած և վատ վիճակի մէջ են.—օրինակ ձեզ Ներսիսեան դպրոցը։ Մենք համոզված ենք, որ «Արձագանքը» իր պաշտպանութեամբ ա ր չ ի ծ ա ռ ա յ ո ւ թ ի ւ ն կը մատուցանի խեղճ Յովհաննան դպրոցին։ Հարցնում ենք. երբ է «Արձագանքը» պաշտպան եղել լաւ բաներին։ Այդ մէկ։ Երկրորդ՝ ինչ վերաբերում է այն փքուն խօսքերին, ինչպէս՝ զ ը ր պ ա ր տ ո ւ թ ի ւ ն, կ ո ղ մ ն ա պ ահ ո ւ թ ի ւ ն, ա ն ա ր դ ա ր յ ա ր ձ ա կ մ ո ւ ն ք, կ ե ղ ծ ի ք, և այլ այդպիսի բառեր, որ Հայաստանեայց եղուիտների օրգանը մի քանի շաբաթից ի վեր այդ դպրոցի առիթով ուղղում է մեր հասցէին,—այսքանը միայն կը պատասխանենք. կան մարդիկ և լրագիրներ, որոնց բերանում նոյնքան սազական են այդ տեսակ բառերը, որքան մահմեդականի բերանում գովասանքը Քրիստոսի հասցէին։ Այդպիսի լրագիրներից է «Արձագանքը» իր ղեկավարներով, որոնք վաղուց զրկված են այդ տեսակ բառեր արտասանելու իրաւունքից։ Զբաղվեցէք, պարոններ, ձեր սիրած փ ե շ ա կ ով, և հանդիսա թողէք այդ բառերը։ Լաւ են ճանաչում ձեզ։

—

«Кавказск. Сельск. Хоз.» շաբաթաթերթը հաղորդում է. «Կարսի զինուորական նահանգապետը, մտադրութիւն ունենալով խնդրել կառավարութիւնից Ղարսի շրջանի՝ Շօրագեալի, Զարուշաղի, Ղարսի, Սօղանլուխի բաժինների և Կաղզուանի շրջանի Նախիջևանի բաժնի անբերրիութիւնից վնասված գիւղացիների գաբնանացանի համար 60,000 պուդ ցորենի և այդքան էլ գարու փոխառութիւն, դիմել է Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան, խնդրելով թոյլ տալ ուղարկել նմուշներ այդ ընկերութեանը՝ գնելի հացահատիկները քննելու համար։ Առաջին անգամ նա ուղարկել է երկու նմուշ 1893 թի հունձից, որ ստացված են Դոնի շրջանից՝ Բոստովի հացավաճառ Զուրիլինից։ Ընկերութիւնը վերաբերվեց այդ խնդրին համակրութեամբ և իր վրա է վերցրել սերմերի յատկութիւնների հետազօտութիւնը այգեգործական դպրոցում»։

—

Ստացանք «Աղբիւր» մանկական ամսագրի այս օրերս լոյս տեսած յունվարի տետրը։ Այս առիթով հարկաւոր ենք համարում յայտնել, որ յունվար ամսից սկսած «Աղբիւրի» հետ միասին կանոնաւոր սկսել է հրատարակվել և «Ցարաղ» պատկերազարդ շաբաթաթերթը։ «Ցարաղի» լոյս տեսած համարներից երևում է, որ «Ցարաղը», եթէ միայն լուրջ ուշադրութիւն դարձնի և բովանդակութեան վրա, կարող է աջողութիւն ունենալ, քանի որ պատկերները բաւական գեղեցիկ և չքեղ են։

—

Գոգոլի արձանի համար հաւաքված գումարը անցեալ տարվայ վերջը էր 63,134 ր. 74 կոպէկ։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ «Կառավարութեան կարգադրութիւնների ժողովածուի» մէջ հրատարակված են կանոններ՝ արհեստաւոր աշակերտների դպրոցների մասին։ Այդ դպրոցները հիմնվում են այն նպատակով, որպէս զի աշակերտները ստանան գիտութիւններ, որոնք անհրաժեշտ են դպրոցից դուրս գալուց յետոյ մասնաւոր վարպետի մօտ մի որ և է արհեստ սովորելու համար։ Գործնականապէս ուսումնասիրվում են այս կամ այն արհեստի սկզբնական ձևերը։ Դպրոցները բաղկացած են երեք դասարաններից, դասընթացը երեք տարի է շարունակվում։ Զբաղմունքի ժամերը դպրոցներում յարմարեցրած են աշակերտների թէ ընտանեկան կեանքին, և թէ նրանց արհեստագիտական գործունէութեանը։

—

Մեզ հաղորդում են, որ մի քանի անձինք ներկայացրել են Բարեգործական ընկերութեան խորհրդին 419 ռուբլի, առաջարկելով այդ գումարը ընկերութեան ճիւղերի միջոցով գործ դնել գաւառական մի քանի քաղաքների կարօտեալներին օգնելու համար։

—

Ներքին գործերի մինիստրութեան կից, որպէս հաղորդում է «С. Петерб. Вѣд.» լրագիրը, մի յատուկ յանձնաժողով է կազմված մինիստրի օգնական Սիպիագինի նախագահութեամբ, գաղթականական հարցը կարգադրելու համար։ Յանձնաժողովի քննութեանը, ի միջի այլոց, առաջարկված է և կովկասեան վարչութեան ցանկութիւնը՝ գաղթեցնել ռուս գիւղացիներին դէպի Անդրկովկասեան շրջանը և Պարսկաստանին սահմանակից տեղերը։

—

Մեզ հաղորդում են, որ Գանձակի նահանգական վարչութիւնը որոշել է մացնել Շուշու մէջ քաղաքային ինքնավարութիւն։ Շուշին ունենալով տարեկան մօտ 50,000 ռուբլի եկամուտ, վաղուց ձգտում էր ունենալ ինքնավարութիւն, բայց այն հանգամանքը, որ Գանձակի նահանգի մէջ, նոյն իսկ նահանգական Գանձակ քաղաքում, չէր մացրված ինքնավարութիւն, արգելք էր լինում այդ ցանկութեան իրագործմանը։

—

«Новости» լրագրին հաղորդում են, որ այն թեմերում, ուր ոչ-ուղղափառ կրօն դաւանող ազգաբնակութիւն կայ, առանձին ուշադրութիւն է դարձվելու այն բանի վրա, որ երբ ուղղափառները պսակվում են օտարադաւանների հետ և որդիք են ունենում, այդ խառն պսակներից ծնված երեխաները պէտք է մկրտվեն ուղղափառ քահանաների ձեռքով։ Այդ օրէնքից շեղվելու իրաքանչիւր դէպքի մասին ծխատէր քահանաները պարտաւոր են անյապաղ տեղեկութիւն տալ իշխանութեանը։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ գրում են. «Այստեղի տգէտ քահանաները, իրանց անվայել վարք ու բարքով, բոլորովին զզուեցրել են ժողովրդին մանաւանդ վերջին ժամանակները։ Ինչպէս լսում ենք, ժողովուրդը սաստիկ զայրացած՝ մի բողոքագիր էր պատրաստում Էջմիածնի հոգևոր իշխանութեան ներկայացնելու, բայց քահանաներից մէկը իմանալով արգելք է եղել, զանազան միջոցների դիմելով։ Հասարակութիւնը սպասում է, որ Էջմիածնից որ և է կարգադրութիւն կը լինի»։

—

ՄՕԶԴՕԿԻՑ մեզ գրում են, որ այդ քաղաքում սաստիկ տարածվել է ինֆլուէնցա հիւանդութիւնը։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Այստեղի Մարիամեան օրիորդաց դպրոցի հոգաբարձուներին Էջմիածնի հոգևոր իշխանութիւնը հաստատել է իրանց պաշտօնի մէջ։ Նոր հոգաբարձուների վրա պարտք կայ աղատել դպրոցը իր ընկած վիճակից։ Դպրոցի ուսուցչական խումբը կազմված է մեծ մասամբ ողորմելի վարժուհիներից և ուսուցիչներից։ Աւագ վարժուհին թէև միջնակարգ ուսում ունի, բայց հայերէնի ամենատարրական ուղղագրութեան դէմ էլ է մեղանչում։ Հայոց լեզուի վարժուհին հայերէն լեզուի մէջ իր աշակերտուհիներից քիչ զանազանութիւն ունի. բարեխիղճ ուսուցիչները շատ քիչ տոկոս են կազմում»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Ամսիս 10-ին, մի ռուս ծառայող՝ օպիում ընդունելով՝ թունաւորվեց և մեռաւ։ Պատճառը յայտնի չէ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Կ. Պոլսից գրում են. «Աս պահուս ի Զըմշկածագ տիրած սովը սրտաբեկութեամբ լցուցած է բոլոր ժողովուրդը, մեծէն մինչև պզտիկ, աղքատէն մինչև հարուստ (եթէ կայ)։

«Եթէ ի նկատի առնենք Զմշկածագի դիրքը, որով անյաղթելի դժուարութեանց մատնուած է մերձակայ գաւառներու հետ հաղորդակցութիւնը, երբ դիտենք թէ հոն ալ ձմեռը վեց-եօթը ամիս կը տևէ և այնչափ խստաշունչ է որչափ ի Կարին, կըմբռնենք կացութեան ծանրութիւնը։

«Ցորեն չը կայ, ալիւր ու հաց չը կայ։ Երանի թէ գարիի ալիւր գտնուէր. կորեկն ես հաղուագիւտ է։ Այժմէն իսկ իւրաքանչիւր գիւղի մէջ 15 կամ 20 տուն անօթի են. երկու երեք և նոյն իսկ չորս օրէ հետէ անօթի մնացողներ, մարած ինկածներ շատ են։ Ի հարկին կրնանք հաստատել այս իրողութիւնը, իրենց անուններով։ Զաւակներին ծախել ուզողներ ալ կան։

«Եւ երբ կը մտածենք թէ տակաւին առնուազն երկու ամիս հաղորդակցութիւնք ընդհատած պիտի մնան, անկարելի կըլլայ չը սարսափիլ երկու ամիս վերջը տիրելիք կացութեան վրա»։

Կ. Պոլսից գրում են. «Կեդրոնական վարժարանի կրօնագիտութեան և եկեղեցական պատմութեան ուսուցիչ Սելքիսեդէկ եպիսկոպոս Մուրատեան, անձնական տկարութեան պատճառաւ հրաժարած ըլլալով այդ պաշտօնէն, իրեն յաջորդ կարգուած է Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան, որ սկսած է արդէն դասախօսութեանց»։

Նիւ-Եօրկից գրում են «Փունջ» լրագրին. «Քանի մը ամիսներէ ի վեր դադրած է Նիւ-Եօրքի հայկական ժամերգութիւնը։ Այս դադարումը բնաւ պատիւ չի բերեր մեզ։ Ասկէց 14 տարի առաջ, ի Նիւ-Եօրք և շրջակայքը միայն 28 հայ կը գտնուէին. այժմ քանի մը հազար կան և եկեղեցիին մէջ միայն 20—25 կը տեսնուին, իսկ թէ պատարագ մատուցուի 150 հոգի»։

Կ. Պոլսից մեզ գրում են. «Կարին, Մուշ, Վան, Զմշկածագ, Ակն, Զարսանճագ ամեն կողմ սովը կը տիրէ»։

ԱՆԳԼԻԱ

—

Մեր ընթերցողները լրագիրներից արդէն գիտեն, որ Գլադստոն վերադարձել է Լոնդոն Բիարրիցից, ուր նա գնացել էր իր առողջութիւնը կաղդուրելու համար։ Նրա վերադառնալուց յետոյ անմիջապէս սկսվեցին համայնքների ժողովի նիստերը։ Պէտք է ասած, որ անգլիական համայնքների ժողովի մօտ տարի ու կիսայ գործունէութիւնը ապարդիւն հետևանքներ է ունեցել, և այդ բանում մեղաւորը լորդերի պալատն է, որը մերժեց համայնքների ժողովի ընդունած իրլանդական օրինագիծը։ Միայն իրլանդական օրինագիծը չէր, որ լորդերի ժողովը մերժեց։ Նա նոյն կերպ վարվեց և երկու ուրիշ օրինագծերի հետ,—ձեռնարկողների պատասխանատուութեան մասին դժբաղդ դէպքերի ժամանակ, որոնց ենթարկվում են բանւորները, և գիւղական համայնքների ինքնավարութեան մասին։ Այդ երկու նախագծերն ես այնպիսի փոփոխութիւններ ենթարկեց լորդերի ժողովը, որ բոլորովին յեղաշրջեց նրանց հիմնական սկզբունքները։ Այդպիսով, լորդերի ժողովը պարզապէս թշնամական դիրք բռնեց դէպի Գլադստոնի կառավարութիւնը և առանց տատանվելու ապարդիւն դարձրեց համայնքների ժողովի բոլոր ջանքերը։ Ի հարկէ, թէ ազատամիտ մինիստրութիւնը և թէ համայնքների ժողովը, լորդերի ժողովի այդպիսի ուղղութեան պատճառով, բաւական նեղն ընկան։ Գլադստոնի մինիստրութեանը մնում է կամ ենթարկվել լորդերի ժողովին, կամ վճռական պատերազմ յայտնել նրան, որի հետևանքը նախատեսել շատ դժուար է։

Լորդերի ժողովը բաղկացած է համարեա բացառապէս պահպանողականներից, և այդ պատճառով էլ նա գործում է համաձայն պահպանողական կուսակցութեան առաջնորդ մարկիզ Սոլսբրիի ցանկութիւններին։ Սոլսբրի համոզվեց, որ համայնքների ժողովում Գլադստոնի հետ դժուար է կըռուել, և այդ պատճառով էլ իր նպատակներին ծառայեցնում է լորդերի ժողովը։ Մարկիզ Սոլսբրիի վերջին ճառերից երևում է, որ պահպանողական կուսակցութիւնը վճռել է յետ չը քաշվել կռուի դաշտից և մինչև վերջը պատերազմել։ Ազատամիտ մինիստրներն ես նոյն կերպ են պատասխանել։ Եւ ահա մենք երեսի հանդիսատես կը լինենք հետաքրքիր անցքերի Անգլիայում։

Անգլիական մի քանի ազատամիտ լրագիրներ յաճախ այն միտքն են յայտնել, որ լորդերի ժողովը ինքն իրան մահվան է դատապարտում, ընթանալով անգլիական պետական կեանքի ուղղութեան դէմ։ Եւ ճշմարիտ, ինչպէս կարելի է կառավարել մի երկիր, որի օրէնսդրական օրգաններից մէկը դէմ է գնում միւսին։ Այդպիսի սուր յարաբերութիւնների հետևանքը երևի այն կը լինի, որ գարնանը անգլիական պարլամենտը կը լուծվի և նոր ընտրութիւններ կը նշանակվեն, այնպէս որ ազատամիտ կուսակցութիւնը իր ընտրողական պրոգրամի գլխաւոր խնդիրը կը դնի լորդերի ժողովի բէֆորմը, և այն ժամանակ անգլիական ժողովուրդը ինքն դատաւոր կը հանդիսանայ և լուծումն կը տայ այդ վէճին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Figaro» լրագրի խօսքերով, գերմանական բէյխստագում Ռուսաստանի հետ դաշնագիր կապելու համար քուէ կը տան սոցիալիստները, պրոգրէսիստները, ազգային ազատամիտները և լեհերը,—բոլորը միաձայն։ Յօգուտ դաշնագրի նոյնպէս ձայն կը տան կենտրոնի կուսակցութեան կէսը և ազատ պահպանողականներից շատերը։ Իսկ պահպանողականները մեծ մասամբ ձեռնպահ կը մնան։

—Բերլինից հեռագրում են, որ Գերմանիայի հինգ դաշնակցական պետութիւնները, հետևելով Բավարիայի և Մէկլենբուրգի օրինակին, դէմ են Ռուսաստանի հետ առևտրական դաշնագիր կապելուն։ Սաքսոնիան յայտնում է, որ դաշնագրի ընդունելը նրա համար կեանքի խնդիր է։ Բավարիայի բողոքները սաստիկ կատաղեցնում են կայսրին։

—Պարիզից «Times» լրագրին հաղորդում են յունվարի 30-ից (փետրվարի 11-ին) հետևեալը. «Այսօր հրատարակվեցին հեռագրական թղթակցութեան նոր կանոններ, որոնց մէջ յիշված են այն բոլոր լեզուները, որոնցով կարելի է հեռագիրներ գրել։ Այդ լեզուները սրանք են՝ ֆրանսիերէն, անգլիերէն, գերմաներէն, արաբերէն, հայերէն, չէխերէն, բուլգարերէն, սլավոներէն, սպանիերէն, ֆլամանդերէն, յունարէն, հրէարէն, հոլլանդերէն, ունգարերէն, իտալիերէն, իտալերէն, եապօներէն, լատիներէն, մալայերէն, նորվեգերէն, պարսկերէն, մալօրսերէն, լեհերէն, պօրտուգալերէն, բումիներէն, բուսիներէն, ռուսերէն, սիամերէն, սլովակերէն, սլովենէրէն, շվեդերէն և թիւրքերէն։ Բացի այս 35 լեզուներից, ուրիշ լեզուով գրված հեռագիրները կարող են չընդունվել հեռագրատանը։

—«Journal des Debats» լրագրի Նիւ-Եօրկի թղթակցի խօսքերով, ներկայումս Չիկագոում 175,000 անգործ մարդիկ կան։ Այդ ամբոխի մէջ ազգաբնակութեան բոլոր դասակարգերն ունեն իրանց ներկայացուցիչները, և յաճախ կարելի է տեսնել, որ լաւ հագնված չէնտլմէնները փողոցներ են աւելում։ Սաստիկ աղքատութեան պատճառով, ի հարկէ, յանցանքներն ես շատացել են։ Չիկագոի բնակիչները գիշերները զինաւորված են դուրս գալիս փողոցները։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գլադստոնի աղջիկներից մէկը տպել է մի յօդուած անգլիական «Good Vill» ամսագրում, որի մէջ նկարագրում է իր հօրը։ «Գլադստոնի գլխաւոր կանոնը, ասում է նրա աղջիկը, հետևեալն է. «երբէք միանգամից երկու գործ չը կատարել»։ Դեռ մանուկ հասակում առաջին անգամ Գլադստոն այդ կանոնը գործադրեց։ «Ցարէք այդ։ Ի՞նչպէս կարող եմ ես միաժամանակ երկու գործ կատարել», ասեց նա մի անգամ իր դայեակին, որը դեղ էր բերել երեխայի համար այն ժամանակ, երբ նա դասեր էր պատրաստում։ Երկրորդ ոչ պակաս եթէ ոչ աւելի, նշանաւոր կանոնը, որին անփոփոխ հետևում է Գլադստոն իր կեանքում, հետևեալ պահանջն է. «ամեն բան լաւ անել» («ինչ որ անում ես լաւ արա»)։ Ցիրաւի, անձնատուր լինելով մի որ և է որոշ գործին, Գլադստոն նուիրում է նրան իր բոլոր ոյժերը, իր ամբողջ ուշադրութիւնը և իր ամբողջ ժամանակը։ Ապա նկարագրում է այն զարմանալի կանոնաւորութիւնը և ճշդութիւնը, որ նկատվում է Գլադստոնի կեանքի մէջ։ Առաւօտեան ճիշդ 8 ժամին նա գնում է Դավարդէնեան ամրոցում եղած իր գրադարանը, իր «խաղաղութեան տաճարը», որպէս նա անուանում է իր այդ գրադարանը։ Ինի կէսին նա գնում է ամեն օր (և այդ 1842 թ-ից) եկեղեցի, որը գտնվում է 3/4 մղոն հեռաւորութեան վրա ամրոցից. միայն հիւանդութիւնը երբեմն կարող էր արգելք լինել այդ սկզբունքին։ Եկեղեցուց վերադառնալուց յետոյ իր ամբողջ ա-

ռաւօտը նուիրում է աշխատութեան. նախաճաշից յետոյ, երկու ժամին նա աշխատում է մօտ մի կամ երկու ժամ։ Մինչև վերջին ժամանակները նա հանդստանում էր փայտեր կտրատելով»։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 փետրվարի։ Երէկ թունաւորվեց Վիաչեսլավ Գայդէբուրով, որը խմբագրում էր «Недѣля» շաբաթաթերթը եղբօր մահից յետոյ և աշխատակցում էր այդ շաբաթաթերթին 15 տարի։—Այսօր նաւթարդիւնաբերողների վերջին նիստում վճռված է պակասեցրած սակագներ նշանակել նաւթային մնացորդների համար։

ԲԵՐԼԻՆ, 16 փետրվարի։ Կապրիվի ասեց. «Ռուսաստանի հետ առևտրական դաշնագիրը կապած ժամանակ Գերմանիան 10 տարի շարունակ խաղաղութիւն կը վայելի. մնում է ուրախանալ Ռուսաստանի համաձայնութեանը։ Մաքսային պատերազմի շարունակութիւնը շատ վնաս է Գերմանիային։ Դաշնագրից մենք վնասներ չենք կրում. Ռուսաստանին տուեցինք միայն այն, ինչ որ տուեցինք Աւստրիային, հետևաբար դաշնագիրը բարեյաջող պայմանների համեմատ է կապված, դաշնագրի չընդունելը կը կորի այն կապը, որ կապում է Ռուսաստանը Գերմանիայի հետ։ Բիսմարկ երկար ժամանակ ձգտում էր դաշնագիր կապել Ռուսաստանի հետ յայտարարելով, որ եթէ ոչ ինքն, նրա յաջորդը կիրագործէ այդ և ահա այժմ իշխանի յաջորդը ձգտում է կատարել նրա ասածը»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 փետրվարի։ Հաղորդակցութեան ճանապարհների սինխրոնութիւնը նախագծել է խորացնել Վոլգայի գետաբերանը. դրա համար 17 միլիոն բուբլի կը պահանջվի։—Այսօր փակվեց 1 և 2 խմբերի երկաթուղիների ներկայացուցիչների միացեալ համագումար ժողովը։ Վճռված է պակասեցնել սակագինը պտուղներ, նաւթ, ոչխարի սորթի և ամեն տեսակ կաւեղէն փոխադրելու համար։

ՊԱՐԻԶ, 17 փետրվարի։ Ֆրանց-Յովսէփի կայսրը ժամանեց Կան-Մարաէն։

ԲԵՐԼԻՆ, 17 փետրվարի։ Այսօր Ռիխտէր փառաւոր կերպով պաշտպանում էր Ռուսաստանի հետ կապելի դաշնագիրը. կծու ծաղրով յարձակվեց նա կալուածատէրերի վրա. հռետորը պահանջում էր շտապողական գործունէութիւն, ի նկատի ունենալով երկրի վնասները։ Կենտրոնի առաջնորդ Լիբէր, չը խօսելով ոչ թեր և ոչ դէմ դաշնագրի, ապացուցանում էր, որ անհրաժեշտ է դաշնագիրը քննել յանձնաժողովում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկկա, Վ. օրօնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւնների։
Կ. Գ. ԶԻԿՈՎԱՆԻ—9—10½ ժ. աչքի և նեարդային հ.
Դ. Դ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10½—11½ ժ. ներքին, երեխաների և կանանց հ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—11½—12½ ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Պին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—12½—1 ժ. կանանց հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների հ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։
Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴԻՆԵՐ։
Հիւանդանոցի վերատեսուչ՝ բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

ՄԻՍ ԶԵՆԻՏԱՆ ծախում է երկու ՍՊԻՏԱԿ ԹՈՒԹԱԿՆԵՐ կակաչու. մինը նոցանից, որ խօսում է, շուայտում է, երգում է և հաչում է, արժէ **150** ՌՈՒԲԼԻ. միւսը արժէ **50** ՌՈՒԲԼԻ։ Կարելի է տեսնել ցերեկվայ ժամի 12-ից մինչև 5-ը „Եւրոպա" հիւրանոցում, ցերկի մօտ։ (№ 17) 3—3

ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ
ուր մշտապէս ապրում են երկու բժիշկ
ԴԵՂԱՏՈՒՆԸ
արվում է ԱՐԵՆԴՈՎ։ Դիմել՝ Эривань, Аконьянцъ.
(№ 20) 1—10

---

50 ՌՈՒԲԼԻ և աւելի ՊԱՐԳԵՒ

կը ստանայ նա, ով անյապաղ կը տայ ամենաճիշդ տեղեկութիւններ Ռուդոլֆ Պետրովիչ ԿԱՈՒՑԻ բնակութեան վերջին տեղի մասին, կամ ով կը տայ նրա մահվան ապացոյցը։

Ռուդոլֆ Կաուց մինչև 1867 թուականը ապրում էր Լեհական Թագաւորութեան մէջ, իսկ 1879 թուին նա ապրում էր Կովկասում։

—

Նամակները պէտք է ուղղել հետևեալ հասցէով.
Фабрика В. Кауца, Варшава, Эриванская № 5. 2—3
(№ 17) (2.)

Զանազան տեղերից դիմում են մեզ՝ պահանջելով մեր հեղինակութիւն „ԿՈՂՈՏՎԱԾ ԵԿԵՂԵՑԻ" վէպից։ Սրանով յայտնում ենք, որ այդ վէպը վաղուց արդէն բոլորովին սպառված է և այլ ևս չէ վաճառվում ոչ մեզ մօտ և ոչ մի որ և է գրավաճառանոցում։
(№ 20) 1—2 ԼՈՒՄԱՑ

ՆԵՐԿԵՐ

ՄԱԶԻ ՀԱՄԱՐ
Վ. ԳԷՆԻ
Վիլնայում

Իսկական պատրաստած։ Անվնաս դեղերն են մազն ու մօրուքը կարճ միջոցում սև, շէկ և բաց ու մուգ շագանակագոյն ներկելու համար։ Մի սրուակի գինը ճանապարհի ծախսով 3 բուբլի է։

Վ. ԱՈՒՐԻԽ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
Կօլօկօլնայա 18.
(№ 8. ամս. 20) 2—8



(4) 14—50

ՇՎԷԴԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ Միքայէլեան փողոցի վրա, № 99, *ստացված են՝ պարտիզային, ծաղկի և խոտի* **ՍԵՐՄԵՐ**, *թարմ, շվէդական՝ շոգիով եփած վարսակի աւլիւր և կրուպա։ Շատ օգտակար է գործածել առհասարակ, մանաւանդ հիւանդ, նիհար երեխաների համար։ Այնտեղ էլ ստացված է* **ՊՐԻՄՈՒՍ** *նոր խոհանոցը, որը վառվում է կերոսինով, առանց պատրոյգի։ Պրէյս-կուրանտները ձրի են տրվում։*
(№ 20) (2.) 1—10

ԿՈՎ ԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ *յայտնում է ի գիտութիւն ընկերութեան անդամների, որ ամսիս 20-ին, կիրակի, երեկոյեան ժամը 7-ին, Թիֆլիսի Դումայի դահլիճում, նշանակված է* ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ, *որի պարապմանն առարկաները լինելու են. 1) Ընկերութեան 1894 թուի նախահաշուի քննութիւնը և հաստատութիւնը. 2) Ընդհանուր ժողովի նախագահի, քարտուղարի, խորհրդի 5 անդամների և 3 փոխ-անդամների ընտրութիւնը. 3) Վերաստուգող յանձնաժողովի 3 անդամների ընտրութիւնը. 4) Դրագարանական յանձնաժողովի 5 անդամների ընտրութիւնը, և 5) Ընկերութեան 15 անդամների տուաջարկը՝ Կարսի և Երևանի նահանգների կարօտեալներին օգնութիւն հասցնելու համար։*

Ծանօթ. Անդամները հրաւիրվում են նորոգել իրանց անդամակցութիւնը, դիմելով պ. Եփրեմ Ծատուրեանի մագազինը։ (№ 18) 3—3

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ
(Առանց սակարկութեան)
ՓԵՏՐՎԱՐԻ 1-ից ՄԻՆՉԵՒ ՄԱՐՏԻ 1-Ը

Եղբ. Գուլասաղիևների մագազինում և պահեստում, Դվորցովայա փողոցի վրա, Կալուածական Բանկի տան մէջ և Սարաջևի ու Ծովիանովի տան մէջ, „բակում"։

Զանազան ապրանքներ։ Կանանց և երեխաների կաստորի և յարդէ գլխարկներ 30 կոպէկից մինչև 1 ր., տղամարդկանց կաստորի գլխարկներ 1 ր. 25 կոպէկից սկսած և աւելի թանգ, վուալներ 20 կոպէկով, կրուժևաներ, ժապաւէններ, ծաղիկներ, զգեստների և գլխարկների համար զուգեր՝ արշինը 20 կոպէկով և աւելի թանգ, անձրևակալներ, հովանոցներ և ձեռնոցներ 20 կոպէկից, ժերսե 1 բուբլուց սկսած և աւելի թանգ։ Եւ նոյնպէս մեծ ընտրութիւն մոդային և գալանտերէյնի ուրիշ ապրանքների էժան գներով, որի մէջ պատուելի հասարակութիւնը կը համոզվի՝ այցելելով մեր վաճառումն։
(№ 12) Յարգանքով՝ ԵՂԲ. ԳՈՒԼԱՍՊՈՎՆԵՐ 9—30

Շուտով լոյս կը տեսնի
„ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԲԺՇԿԱՐԱՆԻ"
առաջին հատորի երկրորդ տետրակը։

Բովանդակութիւն։—Հարինք (брюшной тифъ).—Խոլէրա.—Թանչք (кровавый поносъ).—Անդրադարձ տենդ (возвратный тифъ).—Ճատճային տենդեր (болотныя лихорадки).—Կապոյտ հազ (коклюшъ).—Ինֆլուէնցա։ Առաջին հատորի երրորդ տետրակը, որի բովանդակութիւնն է մարսողական գործարանների հիւանդութիւնները, լոյս կը տեսնի յուլիսին կամ օգոստոսին։ Բժշկարանի երկրորդ հատորը չի ապագրվի՝ սակաւաթիւ բաժանորդներ ունենալու պատճառով։ Բաժանորդներս յետ կը ստանան 1 ր. 50 կ. և կամ, եթէ ցանկութիւն յայտնեն, բժշկարանի առաջին հատորից մի օրինակ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՐԱԾ Է

Իմ հասցէն. Въ г. Елисаветполь. Помощнику Губернскаго Врача, Доктору медицины Теръ-Григорьянцъ. Բժշկապետ Տէր-Գրիգորեանց (Թիֆլիսեցի)
(№ 19) 1—3

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԷՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ *առանի մէջ* **ՆՇԱՆԱԿՎԱԾ Է ԱՃՈՒՐԴ**, *առանց կրկնաճուրդի, վարձով տալու համար էջմիածնական կալուածքը, այն է՝ երեք կրպակներ նկուղով, կաթուղիկէ եկեղեցու մօտ, 4-ին մարտի սոյն ամի, և մի տուն 5-րդ քաղաքամասում, Գրեաղնի անուանեալ փողոցի վրա, 7-ին մարտի։*

Անդամ կոնսիստորիայի՝ Գաբրիել քահ. Տէր-Գաբրիէլեանց
(№ 18) 2—3

Ի. Ե. Բ Ր Օ Ն Ֆ Օ Ն Բ Ր Ե Ն Ն Է Ր

Ցանձն է առնում ՀԱՇԻՎՊԱՀԱԿԱՆ, ԳՐԱՍԵՆՆԱԿԻ և ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆՆԵՐ *պահելու գործը ամբողջ տարվայ ընթացքում, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, հայերէն և ուրիշ լեզուներով. ստուգում է զանազան առևտրական և արդիւնաբերական հաստատութիւնների հաշիւները և մատեանները, քննում, փակում, բանում, և կազմում է առևտրական մատեաններ. ընդունում է առևտրական մատեանների զանազան թիւրիմացութիւնների քննութիւնը և բացատրութիւնը։*

Այն անձինք, որոնք չունեն հաշուապահներ, բայց ցանկանում են ունենալ կանոնաւոր հաշուապահութիւն, կարող են ունենալ ՃԻՇԴ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱՆՑ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՄԱՏԵԱՆՆԵՐ։ *Մատեաններ պահելու համար վերցվում է տարեկան 100 բուբլի և աւելի։ Հասցէն* Елизаветинская, № 25, *ոստիկանական վարչութեան վերին յարկում։*

Ուսուցանում է։

ՀԱՇԻՎ ՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԱԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Վճար { Հաշուապահութեան ամբողջ կուրսի համար (2—3 *ամիս*) **40** ՌՈՒԲԼԻ
Արագագրութեան տեսական կուրսի համար (2 *ամիս*) **50** ՌՈՒԲԼԻ

Պարապմունքներ լինում են ամեն օր, երկու ժամվայ ընթացքում։ Առանձնապարապմունքների համար ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ *բէալական դպրոցի դիրեկտորից և ուրիշ անձերից։*
(№ 16) (2) 2—100

Նոյեմբերի 1-ից կը ստացվի ՊԱՍՏԵՈՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ ՊԱՏՐԱՍՏԱԾ ԲՐՈՒՍՍԱՑԻ ԲՈԺՈՑԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ, *որ արդէն յայտնի է ամբողջ Կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով և տուած առատ բերքով։ Սերմը կը ստացվի ուղղակի յայտնի „Էկոնոմիես" ֆիրմայից։ Գնել ցանկացողները կարող են դիմել* ԵՂԲ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՆԵՐԻՆ, *Բաթումում, Թիֆլիսում, Բագվում. Նուխում Ազա-Մուսա Մահմէդովին.*

Այս հասցէով. Бр. Мнацаканянцъ, Тифлисъ, *կամ* Баку, *կամ* Батумъ.
(*Ե. շ.*) 25—32

ԴԵՂԱԳՈՐԾ **Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵՍԻ** ՊԱՀԵՍՏ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ *դեղերի, մոլիներ գեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և տնտեսական զործիքների, բացված է կուկիայում, Վ. օրօնցօվի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ։*
(№ 67) 65—100 (*Ե. շ.*)

Дозволено цензурою, Тифлисъ, 18 Февраля 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.